ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2022 թվականի թիվ 198-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 127-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի «2022 թվականին տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների օրեր սահմանելու մասին» թիվ 256-Ա որոշումը՝

ո ր ո շ ո ւ մ ե մ .

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով հերթական ընտրություն նշանակել 2022 թվականի սեպտեմբերի 25-ին:
2. Առաջարկել Բերդ համայնքի ղեկավարի տեղակալին.
   օրենքով սահմանված կարգով ապահովել ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացը:
3. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետին.
   ընտրությունների նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում համագործակցել թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հետ:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

13.07.2022

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

12 հուլիսի 2022 թ.
ք.Իջևան